

զրբեալ եւ եպիսկոպոս շեղեալ՝ Վաթողիկոս ձեռնադրի եւ այսու պատճառի՝ Յոհան Վարդապետն, Վօլք կոչեցեալ, աշակերտն Գրիգորի Տաթեւացոյն, ընկենու զսա յԱթոռոյ եւ զՏէր Գրիգորն եդին Վաթողիկոս:

Էջ 77, Ծանօթ. 2: — Վոլտին շերմը՝ այսինքն՝ Եկեղեցւոյ ներսը, գաւիթը եղած ատեն, աւելի մօտէն տեղեակներու ըսածին համեմատ՝ հիմակուանէն աւելի փառաւոր չէ եղած:

Էջ 84—86: — Վ. Պոլսի Պատրիարքութեան բռնած դիրքին եւ դերին վրայ քիչ մ'աւելի ընդարձակ խօսած ենք Բաւարի (Ե. Տարի, 1903. Թիւ 3, Մարտ.) մէջ՝ Վիլիէոյ Վալտերիւսոյ Պատմութիւնը խորագրին տակ գրուած յօդուածով, որուն քանի մը հատուածը կ'արտատպենք հոս.

— «Պոլսի Պատրիարքութեան արդի դիրքը թէ եւ ըստ ձեւին Ազգապետութիւն մըն է Թուրքիոյ Հայոց համար, բայց իրապէս Պատրիարքութիւն մըն է, որ Թուրքիոյ Հայոց ազգային — եկեղեցական գործերը կը վարէ: Եւ Հայոց Վաթողիկոսը, իբր հոգեւոր գլուխ Հայ-Եկեղեցւոյ, Թուրքիոյ Հայոց եպիսկոպոսները կը ձեռնադրէ, միւռոնը կ'օրհնէ եւ եկեղեցական ամենակնճռոտ խնդիրները միայն — զոր օրինակ ամուսնական խնդիրներ եւայլն, — կը տնօրինէ: Եւ որպէս զի Հայոց Վաթողիկոսութեան իշխանութիւնը պահուի զգալապէս եւ յարգուի Թուրքիոյ մէջ, Պոլսի Պատրիարքը իբր Փոխանորդ՝ կը ներկայացնէ Հայոց Վաթողիկոսը. եւ այս անուանական փոխանորդութեան հետեւանքով է որ դադրեցան Էջմիածնի Նուիրակութիւնները Թուրքիոյ մէջ. Նուիրակներ, որոնք Հայոց Վաթողիկոսը կը ներկայացնէին եւ Հայոց Վաթողիկոսութեան իրաւունքները (տուրքերը) կը հաւաքէին: Այս տուրքերը Թուրքիոյ մէջ շատոնց դադրած են իսկապէս իբր թեմական պարտք կամ